# «ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ, ՏԵՍԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**N «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/37-3»**

ք. Երևան «03» սեպտեմբերի 2020թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Հայկ Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ստարտ կոպի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արթուր Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային տեխնիկայի, տեսադիտարկման համակարգերի, գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության առավելագույն գինը կազմում է 3 315 000 (երեք միլիոն երեք հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հաստատման օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Ծառայությունների դեպքում, մատուցված Ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն Պայմանագրով սահմանված առանձին տեսակի Ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված Ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված Ծառայության քանակն է:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ

տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը

ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով Պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում և (կամ) այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման

դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն Պայմանագիրը կազմված է 26 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ | «Ստարտ Կոպի Գրուպ» ՍՊԸ |
| Հասցե՝ ք. Երևան, Ձ. Անդրանիկի 1 | ք. Երևան, Մարգարյան 2 նրբ., 3 շ. 15 բն. |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ | «Այ Դի Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1150001172630300 | ՀՀ 11817069156200 |
| ՀՎՀՀ 01522459 | ՀՎՀՀ 01302145 |
| Գլխավոր տնօրեն | Տնօրեն |
| _______________ Հ. Հարությունյան | _______________ Ա. Պետրոսյան |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 03 » 09 2020թ. կնքված*
*«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-20/37-3» ծածկագրով Պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## համակարգչային տեխնիկայի, տեսադիտարկման համակարգերի, գրասենյակային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մատուցման | |
| հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնի-կական բնութա-գիրը | Չափ-ման միա-վորը | Մասնակցի առաջարկած միավոր գների հանրագումար /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը |
| 3 | 50311120/5 | Պատճենա-հանող սարքերի վերանորոգում և սպասարկում | Ներկայացված է հա-վելված 1.1- ով | դրամ | 1539600 | 1 | ք. Երևան, Չ.Անդրանիկի 1/ ք. Սևան, Էներգետիկների 4/ ք. Վանաձոր, Թևոսյան 2/ ք. Գյումրի, Ղարսի խճ.25/ ք. Կապան, Գործարանային 15/ ք. Գորիս, Երևանյան խճուղի 1 | 15.09.2020-14.09.2021թթ. |
| 4 | 50311200/1 | Թանաքային տպիչների վերանորոգում և սպասարկում | Ներկայացված է հա-վելված 1.1- ով | դրամ | 224400 | 1 | ք. Երևան, Չ.Անդրանիկի 1/ ք. Սևան, Էներգետիկների 4/ ք. Վանաձոր, Թևոսյան 2/ ք. Գյումրի, Ղարսի խճ.25/ ք. Կապան, Գործարանային 15/ ք. Գորիս, Երևանյան խճուղի 1 | 15.09.2020-14.09.2021թթ. |
| 5 | 50311120/6 | Պլոտեր HP Designjet 500 վերանորոգում և սպասարկում | Ներկայացված է հա-վելված 1.1- ով | դրամ | 232500 | 1 | ք. Երևան, Չ.Անդրանիկի 1 | 15.09.2020-14.09.2021թթ. |
| 6 | 50311120/7 | Մոնիտորի վերանորոգում | Ներկայացված է հա-վելված | դրամ | 145800 | 1 | ք. Երևան, Չ.Անդրանիկի 1/ ք. Սևան, Էներգետիկների 4/ | 15.09.2020-14.09.2021թթ. |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1.1- ով | | | | ք. Վանաձոր, Թևոսյան 2/ ք. Գյումրի, Ղարսի խճ.25/ ք. Կապան, Գործարանային 15/ ք. Գորիս, Երևանյան խճուղի 1 | |
| 7 | 50311120/8 | Սկանի ապարատի վերանորոգում | Ներկայացված է հա- վելված 1.1- ով | դրամ | 28200 | 1 | ք. Երևան, Զ.Անդրանիկի 1/ ք. Սևան, Էներգետիկների 4/ ք. Վանաձոր, Թևոսյան 2/ ք. Գյումրի, Ղարսի խճ.25/ ք. Կապան, Գործարանային 15/ ք. Գորիս, Երևանյան խճուղի 1 | 15.09.2020-14.09.2021թթ. |
| 8 | 50311120/9 | Անխափան սնուցման սարքերի վերանորոգում | Ներկայացված է հա- վելված 1.1- ով | դրամ | 189000 | 1 | ք. Երևան, Զ.Անդրանիկի 1/ ք. Սևան, Էներգետիկների 4/ ք. Վանաձոր, Թևոսյան 2/ ք. Գյումրի, Ղարսի խճ.25/ ք. Կապան, Գործարանային 15/ ք. Գորիս, Երևանյան խճուղի 1 | 15.09.2020-14.09.2021թթ. |

| Այլ պայմաններ | |
|---|---|
| Ծառայության մատուցումը | 3-8 չափաբաժինների համար ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ըստ տեխնիկական բնութագրի: ՀՀ մարզերում գտնվող հասցեներում բոլոր ծառայությունների մատուցումը անհրաժեշտ է իրականացնել պահանջագրի ներկայացման հաջորդ օրվանից հաշված մինչև 7 աշխատանքային օրվա ընթացքում: Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին և որակյալ: Կատարողի կողմից ներկայացված հեռախոսահամարը և էլ. հասցեն պետք է լինեն մշտապես հասանելի: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի, այլ ապրանքների և նյութերի արժեքները ներառվում են ծառայության ընդհանուր գնի մեջ և տրամադրվում են Կատարողի կողմից: Բոլոր պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված և որակյալ: Սարքեր և սարքավորումների անխափան և նպատակային շահագործումն ապահովելու նպատակով Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով կատարել տեխնիկական բնութագրով նախատեսված բոլոր ծառայությունների մատուցումը՝ ըստ Պատվիրատուի հայեցողության: Այցելությունները պետք է իրականացվեն 9:30 – ից մինչև 12:30 և 13:30 – ից մինչև 16:30 ընկած ժամանակահատվածում: Անհրաժեշտությունից ելնելով ծառայության մատուցումը կարող է իրականացվել Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում |

| | |
|---|---|
| | սարքավորման (սարքավորումների) տեղափոխությունն ու վերադարձը իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով:<br>Պատվիրատուի պահանջով Կատարողը պարտավոր է ներկայացնել դիագնոստիկայի ենթարկված սարքավորման կամ սարքավորումների արդյունքները էլեկտրոնային տարբերակով:<br>Կատարողի մեղքով վնասված սարքավորումները կամ պահեստամասերը կամ այլ բաղկացուցիչ մասերը ենթակա են փոխարինման, Կատարողի միջոցներով և Կատարողի հաշվին: |
| Երաշխիքային ժամկետը | Երաշխիքային ժամկետը ըստ տեխնիկական բնութագրի: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Ձ. Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
Գլխավոր տնօրեն
______________ Հ. Հարությունյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ստարտ Կոպի Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Մարգարյան 2 նրբ., 3 շ. 15 բն.
«Այ Դի Բանկ» ՓԲԸ
ՀՀ 11817069156200
ՀՎՀՀ 01302145
Տնօրեն
______________ Ա. Պետրոսյան
(ստորագրություն)
Կ.Տ

| 3 | Պատճենահանող սարքերի վերանորոգում և սպասարկում | | | |
|---|---|---|---|---|
| 3.1 | Պատճենահանող սարքերի պրոֆիլակտիկա | Պրոֆիլակտիկա (սարքի ընդհանուր մաքրում (ներսից և դրսից), յուղում, թերմոքսուկների փոխարինում, ռետինե մասերի մաքրում): Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երեք աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.1.1 | Canon iR 2318L | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.1.2 | Canon iR 3530 | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.1.3 | Canon iR 2016 | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.1.4 | Xerox WorkCentre 5020 | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.1.5 | Canon IR 2520 | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.1.6 | Canon NP 6317 | Պրոֆիլակտիկա | հատ | 9000 |
| 3.2 | Պատճենահանող սարքերի դիագնոստիկա | Դիագնոստիկա: Ընդհանուր թերությունների և անսարքությունների հայտնաբերում: Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդ աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.2.1 | Canon iR 2318L | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.2.2 | Canon iR 3530 | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.2.3 | Canon iR 2016 | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.2.4 | Xerox WorkCentre 5020 | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.2.5 | Canon iR 2520 | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.2.6 | Canon NP 6317 | Դիագնոստիկա | հատ | 2000 |
| 3.3 | Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: Տպաքանակ առնվազն 35000-40000 էջ: | | |
| 3.3.1 | Xerox WorkCentre 5020 | Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում | հատ | 10000 |
| 3.3.2 | Canon NP 6317 | Վառարանի տեֆլոնե լիսեռի փոխարինում | հատ | 10000 |
| 3.4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: Տպաքանակ առնվազն 35000-40000 էջ: | | |
| 3.4.1 | Canon iR 2318L | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում | հատ | 12000 |
| 3.4.2 | Canon iR 3530 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում | հատ | 12000 |
| 3.4.3 | Canon iR 2016 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում | հատ | 12000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.4.4 | Canon iR 2520 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում | հատ | 12000 |
| 3.5 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: Տպաքանակ առնվազն 60000էջ և ավել: | | |
| 3.5.1 | Canon iR 2318L | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.5.2 | Canon iR 3530 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.5.3 | Canon iR 2016 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.5.4 | Xerox WorkCentre 5020 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.5.5 | Canon iR 2520 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.5.6 | Canon NP 6317 | Վառարանի ռետինե լիսեռի (թերմոռեզինի) փոխարինում | հատ | 16000 |
| 3.6 | Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.6.1 | Canon NP 6317 | Վառարանի ֆետրե լիսեռի փոխարինում | հատ | 5000 |
| 3.7 | Թմբուկի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: Տպաքանակ առնվազն 30000-35000 էջ: | | |
| 3.7.1 | Canon iR 2318L | Թմբուկի փոխարինում | հատ | 9000 |
| 3.7.2 | Canon iR 3530 | Թմբուկի փոխարինում | հատ | 12000 |
| 3.7.3 | Canon iR 2016 | Թմբուկի փոխարինում | հատ | 9000 |
| 3.7.4 | Xerox WorkCentre 5020 | Թմբուկի փոխարինում, չիպը ներառյալ | հատ | 13500 |
| 3.7.5 | Canon iR 2520 | Թմբուկի փոխարինում | հատ | 10000 |
| 3.7.6 | Canon NP 6317 | Թմբուկի փոխարինում | հատ | 8000 |
| 3.8 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.8.1 | Canon iR 2318L | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 42000 |
| 3.8.2 | Canon iR 3530 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 43000 |
| 3.8.3 | Canon iR 2016 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 42000 |
| 3.8.4 | Xerox WorkCentre 5020 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 20000 |
| 3.8.5 | Canon iR 2520 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 42000 |
| 3.8.6 | Canon NP 6317 | Մագնիսական լիսեռի/վալի փոխարինում | հատ | 20000 |
| 3.9 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.9.1 | Canon iR 2318L | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.9.2 | Canon iR 3530 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |
| 3.9.3 | Canon iR 2016 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |
| 3.9.4 | Xerox WorkCentre 5020 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |
| 3.9.5 | Canon iR 2520 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |
| 3.9.6 | Canon NP 6317 | Չափաբաշխող դանակի (դոզատոր) փոխարինում | հատ | 8000 |
| 3.10 | Մաքրող դանակի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: Տպաքանակ առնվազն 30000-35000 էջ: | | |
| 3.10.1 | Canon iR 2318L | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.10.2 | Canon iR 3530 | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.10.3 | Canon iR 2016 | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.10.4 | Xerox WorkCentre 5020 | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.10.5 | Canon iR 2520 | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.10.6 | Canon NP 6317 | Մաքրող դանակի փոխարինում | հատ | 6000 |
| 3.11 | Լուսածրիչի լամպի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.11.1 | Canon iR 2318L | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.11.2 | Canon iR 3530 | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.11.3 | Canon iR 2016 | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.11.4 | Xerox WorkCentre 5020 | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.11.5 | Canon iR 2520 | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.11.6 | Canon NP 6317 | Լուսածրիչի լամպի փոխարինում | հատ | 35000 |
| 3.12 | Վառարանի լամպի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.12.1 | Xerox WorkCentre 5020 | Վառարանի լամպի փոխարինում | հատ | 12000 |
| 3.12.2 | Canon NP 6317 | Վառարանի լամպի փոխարինում | հատ | 12000 |
| 3.13 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.13.1 | Canon iR 2318L | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |
| 3.13.2 | Canon iR 3530 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |
| 3.13.3 | Canon iR 2016 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |
| 3.13.4 | Xerox WorkCentre 5020 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.13.5 | Canon iR 2520 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |
| 3.13.6 | Canon NP 6317 | Վառարանի ատամնանիվների փոխարինում | զույգ | 6000 |
| 3.14 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.14.1 | Canon iR 2318L | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.14.2 | Canon iR 3530 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.14.3 | Canon iR 2016 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.14.4 | Xerox WorkCentre 5020 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.14.5 | Canon iR 2520 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.14.6 | Canon NP 6317 | Շարժիչի շարժաբերի ատամնանիվների փոխարինում | զույգ | 20000 |
| 3.15 | Կարատրոնի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.15.1 | Canon iR 2318L | Կարատրոնի փոխարինում | հատ | 6000 |
| 3.15.2 | Canon iR 3530 | Կարատրոնի փոխարինում | հատ | 6000 |
| 3.15.3 | Canon iR 2016 | Կարատրոնի փոխարինում | հատ | 6000 |
| 3.15.4 | Xerox WorkCentre 5020 | Կարատրոնի փոխարինում | հատ | 6000 |
| 3.15.5 | Canon iR 2520 | Կարատրոնի փոխարինում | հատ | 6000 |
| 3.16 | Կարատրոնի բլոկի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.16.1 | Canon NP 6317 | Կարատրոնի բլոկի փոխարինում | հատ | 8000 |
| 3.17 | Կարատրոնի լարի փախարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.17.1 | Canon NP 6317 | Կարատրոնի լարի փախարինում | հատ | 4000 |
| 3.18 | Drum unit-ի փոխարինում | Ծառայությունների մատուցումը իրականացվում է ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման հաջորդող երկու աշխատաքային օրվա ընթացքում: | | |
| 3.18.1 | Canon iR 2318L | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 95000 |
| 3.18.2 | Canon iR 3530 | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 89000 |
| 3.18.3 | Canon iR 2016 | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 95000 |
| 3.18.4 | Xerox WorkCentre 5020 | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 50000 |
| 3.18.5 | Canon iR 2520 | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 120000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.18.6 | Canon NP 6317 | Drumunit-ի փոխարինում օրիգինալով | հատ | 30000 |
